

**ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահի ողջույնի խոսքը 25-րդ  
միջազգային լազերային գիտաժողովի անցկացման կապակցությամբ**

Գիտաժողովի հարգելի մասնակիցներ,

Ուրախ եմ ձեզ ողջունելու 25-րդ Միջազգային լազերային գիտաժողովի անցկացման կապակցությամբ: Եվ թույլ տվեք շնորհավորել 2 կարևոր իրադարձության՝ Ալեքսանդր Պրոխորովի ծննդյան 100-ամյակի և Ամերիկայի օպտիկական միության հիմնադրման 100-ամյակի առիթով:

Հատկանշական է, որ նման թեմայով հոբելյանական գիտաժողով է կազմակերպվում Հայաստանում: Եվ շատ ուրախալի է, որ այս միջոցառմանը մասնակցում է շուրջ 500 գիտնական՝ 47 երկրից:

Մեր երկիրը գիտության այս և, ընդհանրապես, ֆիզիկայի ոլորտում միշտ էլ առաջատար է եղել՝ հիմնարար և կիրառական գիտական հետազոտությունները, դրանց հիման վրա ստեղծվող տեխնոլոգիաները Հայաստանի Հանրապետությունում ունեն ձևավորված ավանդույթներ և կայացած ու միջազգային մակարդակին համապատասխանող գիտական դպրոցներ, որոնք արդարացիորեն համընդհանուր ճանաչում են ստացել աշխարհում և պահպանում են իրենց բարձր վարկանիշը:

Այսօր էլ Հայաստանում խիստ կարևորվում են ֆիզիկայի ոլորտում իրականացվող աշխատանքները և ոլորտի զարգացմանն ուղղված միջոցառումները: Գիտական կազմակերպություններով և միջազգային ճանաչում ունեցող մասնագետներով հարուստ այս բնագավառը հանդիսանում է Հայաստանի գիտության ամենաարագ զարգացող ճյուղերից մեկը:

ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեն ևս խիստ կարևորում է ոլորտի նշանակությունը և պետական բյուջեի սահմաններում մշտապես իր աջակցությունն է ցուցաբերում նման միջոցառումների կազմակերպմանը:

Ընդհանրապես, նմանատիպ միջոցառումները միտված են միջազգային փոխշահավետ համագործակցությունը խրախուսելուն և մասնագիտական

բազմապրոֆիլ հարթակ ստեղծելուն: Դրանք ոլորտի գիտաշխատողներին հնարավորություն են տալիս ներկայացնել իրենց կողմից իրականացվող և կիրառական հետաքրքրություն ներկայացնող հետազոտությունների արդյունքները, ինչպես նաև՝ իրենց գործունեությանն առնչվող խնդիրները:

Գիտաժողովը կարևորվում է նաև նրանով, որ արդյունքում կակտիվանա միջազգային փոխհամագործակցությունը, էականորեն կավելանան իրականացվող համատեղ նախագծերի քանակը:

Ամփոփելով խոսքս, ուզում եմ նշել, որ ժամանակակից գիտության առջև ծառայած հիմնահարցերի մեծ մասը համընդհանուր մարտահրավերներ են, և դրանց լուծումները նույնպես պահանջում են համընդհանուր պատասխան միջոցառումներ: Համաշխարհային կարևորության շատ գիտական հետազոտություններ հնարավոր է իրականացնել միայն խոշորամասշտաբ համագործակցությունների շրջանակներում. և նմանատիպ գիտաժողովները խթան են հանդիսանում, որպեսզի զարգանա միջազգային գիտական և գիտատեխնիկական համագործակցությունը, իսկ սահմանափակ ռեսուսներով երկրները կարողանան հաստատվել համաշխարհային գիտական, գիտակրթական և գիտատեխնոլոգիական տարածքում:

Հարգելի մասնակիցներ,

մեկ անգամ ևս ողջունում եմ բոլորիս գիտաժողովի կապակցությամբ, շնորհակալություն եմ հայտնում ղեկավար կոմիտեին այս հոբելյանական միջոցառումը Երևանում անցկացնելու համար:

Մաղթում եմ արդյունավետ և հաճելի աշխատանք:

Մամվել Հարությունյան